

««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ԲԺՎարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ԲժՎարչական իրավախախտության անվտանգության ապահովման մասին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝

1. <<Է>> կետը <<կարգը>> բառից հետո լրացնել <<և պարբերականությունը>> բառերով,
2. <<թ>> կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի

1. 2-րդ մասի 2-րդ պարբերությունը, 3-րդ և 7-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել,
2. 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<>:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <<ժա>> կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ժա) տրանսպորտային միջոցն օրենքով սահմանված ժամկետում չի անցել տեխնիկական զննություն կամ տեխնիկական զննության արդյունքում ճանաչվել է անսարք:

Հոդված 4. Օրենքի 18²-րդ հոդվածի 1-ին մասի <<բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը գտնվում է վարորդի մոտ: Այդ դեպքում կտրոնը փակցվում է սահմանված տեղում, և թույլատրվում է տրանսպորտային միջոցի հետագա շահագործումը>> բառերը հանել:

Հոդված 5. Օրենքի 33¹-րդ հոդվածի 2-րդ մասի <<ժգ>> և 33² հոդվածի <<ե>> կետերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԶՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝

Օրենսգիրք) 123⁴-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 123⁴. Սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված), տեխնիկական գննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը, տրանսպորտային միջոցի նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը, առանց տեխնիկական գննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը կամ տեխնիկական գննություն անցած տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր տվյալները և տեխնիկական գննության արդյունքները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված) տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը`

առաջացնում են տուգանքի նշանակում` սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տեխնիկական գննություն չանցած կամ տեխնիկական գննության արդյունքում անսարք ճանաչված տրանսպորտային միջոց վարելը`

առաջացնում է տուգանքի նշանակում` սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

3. Առանց տեխնիկական գննություն անցկացնելու կամ տեխնիկական անսարքություն ունեցող տրանսպորտային միջոցը տեխնիկապես սարքին ճանաչելը`

առաջացնում է տուգանքի նշանակում տեխնիկական գննության կայանի ղեկավարի նկատմամբ` սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկի չափով` լիցենզիայի գործունեության դադարեցմամբ կամ առանց դրա:

4. Տեխնիկական գննություն անցած տրանսպորտային միջոցի վերաբերյալ բոլոր տվյալները և տեխնիկական գննության արդյունքները առցանց չփոխանցելը կամ թերի փոխանցելը`

առաջացնում է տուգանքի նշանակում` սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով` լիցենզիայի գործունեության դադարեցմամբ կամ առանց դրա:

Հոդված 2. Օրենսգրքի 224 հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը 123.4 թվերից հետո լրացնել (բացառությամբ երրորդ և չորրորդ մասերով

նախատեսված իրավախախտումների)՝ բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 227¹ հոդվածի վերնագրում և տեքստում
«տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 244¹³ հոդվածի 1-ին պարբերության «օրենսգրքի»
բառից հետո լրացնել «123⁴ հոդվածի երրորդ և չորրորդ մասերով» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 304 հոդվածի երրորդ պարբերության «123-131» թվերը
փոխարինել «123-123.4 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.5-131» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս
հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 28.1 կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 36.1 հոդվածի 1-ին մասի լիցենզիայի տրամստրոտի և կապի բառերը փոխարինել լիցենզիայի տրամստրոտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

